

STAFF ANALYSIS

Vol. 5 No. 6 | March 2016

Տեղեկատվական արտահոսք ՀՀ զինված ուժերի վերաբերյալ կամ Ռուսաստանի նոր ռազմավարությունը տարածաշրջանում Հայկակ Արշամյան

2016թ. մարտի 9-ին Ռուսաստանի Քաղաքական և ռազմական վերլուծությունների ինստիտուտի փոխտնօրեն Ալեքսանդր Խրամչիխինը «Ռազմա-արդյունաբերական կուրիեր» շաբաթաթերթում հրապարակել է «Հարցականներով ֆորպոստ: Ռուսաստանի՝ Թուրքիայի հետ հակամարտության դեպքում Հայաստանը կհայտնվի առաջնագծում» վերտառությամբ մի վերլուծական (տես՝ «Форпост с вопросами. В случае конфликта России с Турцией Армения оказывается на передовой», <http://vpk-news.ru/articles/29587>):

Այն մանրամասն վեր է հանում ՀՀ-ի զինված ուժերի սպառնազինությունը, տեղակայությունը ըստ բանակային կորպուսների, գումարտակների և բրիգադների: Թվաքանակով նշվում է նաև ծանր զրահատեխնիկան, ավիաբազաները, դրանց տեղակայությունը: Նույն սկզբունքով նկարագրվում է նաև ԼՂՀ պաշտպանության բանակը: Հեղինակը նույնիսկ բացահայտում է Գյումրիում տեղակայված ռուսական 102-րդ ռուսական ռազմարագայի սպառնազինությունը:

Առաջին հայացքից թվում է, թե սույն վերլուծականը գուտ ռուսական պրոպագանդայի հերթական սադրանքն է, որին նախորդել էր ՌԴ Պաշտպանության նախարարության կայքում վերջերս Հայաստանին 200 մլն դոլարի վարկով տրամադրված զենք-զինամթերքի ցուցակի հրապարակումը:

Սակայն, ուսումնասիրելով «Ռազմա-արդյունաբերական կուրիեր» շաբաթաթերթի վերջին երեք ամիսների հրապարակումները, հանդիպում ենք նախկին ԽՍՀՄ տարածքի մի շարք երկրների զինված ուժերի վերաբերյալ նույնական վերլուծականների:

Օրինակ՝ «Կիսազինված ուժեր: Վրաստանը կարող է պարծենալ իր բանակով, բայց ոչ ավելին» վերտառությամբ Վրաստանի բանակի վերաբերյալ հոդվածը (ամբողջական հոդվածը տես՝ «Полувооруженные силы. Грузия может похвастаться своей армией, но не больше», <http://vpk-news.ru/articles/29349>), որտեղ նմանատիպ մանրամասնությամբ ներկայացնում է վրացական բանակի սպառնազինությունը:

Մեկ այլ՝ «Հարկադիր անդիմադրողականները: Արևելյան նորակոչիկների բանակները պատերազմ կարող են գնալ միայն սպիտակ դրոշով» (մանրամասները տես՝ «Вынужденные непротивленцы. Армиям восточных новобранцев можно идти на войну только под белым флагом», <http://vpk-news.ru/articles/29215>), վերլուծականը ներկայացնում է Մոլդովայի, Լիտվայի, Լատվիայի և Էստոնիայի սպառնազինությունը: Ավելի վաղ նույն հեղինակը նմանատիպ վերլուծականներ է հրապարակել նաև Բելառուսի (<http://vpk-news.ru/articles/29106>) և Ուկրաինայի զինված ուժերի հնարավորությունների վերաբերյալ (<http://vpk-news.ru/articles/28601>):

Փաստորեն, Ալեքսանդր Իսրամչիխին այս շարքը սկսել է 2015թ. դեկտեմբերին, որի ամենավերջին հոդվածը վերաբերում էր Հայաստանի Հանրապետությանը և ԼՂՀ-ին: Ամենայն հավանականությամբ հաջորդ վերլուծականում նա կանդրադառնա նաև Ադրբեջանի գինված ուժերին:

Ըստ էության, ռուս վերլուծաբանը, տիրապետելով հույժ գաղտնի տեղեկատվության, բացահայտում է Արևելյան գործընկերության ծրագրի մեջ ներառված երկրների, ինչպես նաև ՆԱՏՕ-ի անդամ մերձբալթյան երկրների գինված ուժերի վերաբերյալ տվյալներ: Բնականաբար, նման տեղեկատվությունն անհնար է ստանալ գրքերից, ինտերնետային կայքերից և/կամ լրագրողական հետաքննության արդյունքում: Պարզ է, որ այս տեղեկատվությունը հեղինակը ստացել է անմիջապես ՌԴ պաշտպանության նախարարության և հատուկ ծառայությունների խողովակներով: Եթե Ուկրաինայի, Վրաստանի, Մոլդովայի և մերձբալթյան երկրների պարագայում քիչ թե շատ պարզ է նման տեղեկատվության տարածումը, որոնց հետ Ռուսաստանը մեղմ ասած բարիդրացիական հարաբերություններ չունի, ապա Հայաստանի պարագայում այն քաղաքական լուրջ սկանդալի հիմք կարող է հանդիսանալ: Հայաստանը, ի տարբերություն մյուս երկրների, գոնե պաշտոնապես հանդիսանում է Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցը, ինչպես նաև՝ ՀԱՊԿ հիմնադիր անդամ է:

Թե ինչո՞ւ է ռուսական կողմը իր բավական հայտնի ռազմաքաղաքական շաբաթաթերթում հրապարակում նմանատիպ հոդված Հայաստանի և ԼՂՀ մասին, դեռևս այնքան էլ պարզ չէ, բայց առկա են մի շարք հարցադրումներ, որոնց ՀՀ իշխանությունները պետք է արձագանքեն: Առաջին հերթին, ինչպե՞ս է նման տեղեկատվությունը հայտվել ռուսական կողմի մոտ: Նույնիսկ, եթե ՀՀ և ՌԴ պաշտոնյաները հայտարարում են, որ դրանք ամբողջական չեն և/կամ դրանք ռազմական գաղտնիք չեն պարունակում: Կամ այդ տվյալները հայկական կողմն է փոխանցել իր ռուս գործընկերներին, կամ ռուսական հատուկ ծառայությունները լրտեսել ու հավաքագրել են այդ տեղեկատվությունը, ապա և հրապարակել ռուս վերլուծաբանի ձեռամբ: Ընդ որում, սույն հրապարակմանը նախորդել էր ՌԴ բարձրաստիճան այրերի այցը Ադրբեջան, ինչպես նաև այս հրապարակմանը հաջորդել է Մերժ Սարգսյանի պաշտոնական այցը Մոսկվա ս.թ. մարտի 10-ին:

Ամենայն հավանականությամբ, ռուսական իշխանությունները տարբեր ուղերձներ են հղում տարածաշրջանի երկրներին: Թուրքիայի պարագայում դա ևս մեկ զգուշացում է, որ Հայաստանում գտնվող ռուսական ռազմաքաղաքի հիմնական գործառույթը թուրքական սպառնալիքի չեզոքացումն է և Հայաստանի վրա հարձակման դեպքում Ռուսաստանն անտարբեր չի մնա: Չնայած սա հայտնի փաստ է, սակայն այն տեղավորվում է վերջին մի քանի ամիսների ռուս-թուրքական լարված հետտորաբանության համատեքստում:

Իսրամչիխինի վերլուծականով Ռուսաստանն Ադրբեջանին հասկացնում է, որ Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական գործողությունների պարագայում հնարավոր է, որ չեզոքություն պահի, սակայն ՀՀ դեմ բացահայտ ագրեսիայի պարագայում ՌԴ-ն անտարբեր չի մնա: Բնականաբար սա տեղավորվում է Թուրքիա-Ադրբեջան առանցքի, ինչպես նաև՝ Ռուսաստանից միլիարդավոր դոլարների զենքի գործարքի համար Ադրբեջանի անվճարունակության բացասման համատեքստում:

Վերջապես, Հայաստանի պարագայում, ՌԴ-ն ևս մեկ անգամ հասկացնում է, թե ՀՀ-ն ոչ միայն քաղաքական և տնտեսական, այլև՝ ռազմական առումով որքան մեծ կախվածություն ունի իրենից, ինչպես նաև՝ ամբողջապես տիրապետում է երկրի անվտանգությանը վերաբերող նույնիսկ հույժ գաղտնի տեղեկատվության: Մինչև սույն ժամանակ, հաշվի առնելով, որ Ռուսաստանը վերջերս բազմիցս անդրադարձել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման անհրաժեշտությանը, ինչպես նաև Մերժ Սարգսյանի մոսկովյան այցի օրակարգում է սույն հիմնահարցի քննարկումը ՌԴ նախագահ Վ.Պուտինի հետ, ապա պարզ է դառնում, որ ՌԴ-ն ամենայն լրջությամբ ստանձնել է Լեռնային Ղարաբաղի ստատուս քվոյի փոփոխության հարցը: Թե ինչ արդյունքներ կլինեն, ցույց կտան տարածաշրջանում հետագա զարգացումները: Ռուսաստանը ևս մեկ անգամ խառնում է բոլոր խաղաքարտերը, դրանք նորից բացելու և իր շահերից բխող քայլեր կատարելու համար: